ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

05-ը նոյեմբերի 2023թ.

Շնորհավորական ուղերձ Հետախույզի օրվա կապակցությամբ

Հայաստանի Հանրապետության զինված ուժերում նոյեմբերի 5-ին նշվում է հետախույզի մասնագիտական օրը: Մասնագիտություն, որը պահանջում է ունենալ ամուր կամք, մարտունակ ոգի, ֆիզիկական և տեսական բարձր պատրաստվածություն: Այս որակներով մեր հետախուզական զորքերը թե՛ պատերազմական և թե՛ խաղաղ ժամանակներում մշտապես իրականացնում են մեծարժեք ծառայություն, բազմիցս կանխում են թշնամական ներթափանցումներն ու տարաբնույթ սադրանքները սահմանին:

Այս խորհրդանշական օրով առաջնահերթ ուզում եմ իմ հարգանքն ու խոնարհումն արտահայտել արցախյան պատերազմներում նահատակված մեր քաջարի հետախույզների հիշատակին: 44-օրյա պատերազմի ընթացքում Աբովյանը անդառնալի կորուստ ունեցավ. մարտական առաջադրանք կատարելիս զոհվեց հայրենասիրության վառ օրինակ, փոխգնդապետ Վահագն Թումասյանը: Մենք պետք է հիշենք և սերունդներով փառավորենք նվիրյալ հետախույզների անուրանալի ծառայությունն ու սխրանքները:

Հետախուզական ստորաբաժանումների բարդ, պատասխանատու ծառայությունը առանձնահատուկ կարևորություն ունի հայրենիքի պաշտպանության գործում. հետախույզները մեր առաջամարտիկներն են, ովքեր մշտապես հայտնվում են վտանգավոր կետերում՝ ապահովելով երկրի ներքին կայունությունն ու արտաքին անվտանգությունը:

Մասնագիտական օրվա առիթով շնորհավորում եմ ՀՀ ուժային կառույցների հետախույզներին և մաղթում առողջություն, զգոն և արդյունավետ ծառայություն:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Է. ԲԱԲԱՅԱՆ